

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը Տարեցների միջազգային օրվա առթիվ

01.10.2019

Հարգելի հայրենակիցներ

Մեր խոնարհումն ու երախտագիտությունն ենք հայտնում Հայոց հայրենիքին մարմին ու ոզի տված մեր տատ ու պապերին, հայրերին ու մայրերին, որոնցից յուրաքանչյուրի անցած ուղին ՝ լի է մաքառումներով, աշխատասիրությամբ ու արարչագործությամբ: Այդ նրանք են զարկ տվել մեր տնտեսությանը, գիտությանը, մշակույթին ու այլ ոլորտներին: Այժմ էլ նրանք մեր կողքին են իրենց խորհուրդներով, կենսափորձով ու ծնողական օրհնանքով: Եվ առավել քան երջանիկ է այն ընտանիքը, որը վայելում է իր տարեց անդամի հաճելի ներկայությունը, որդիական պարտքի գիտակցումը: Մեր գորակցությունն ենք հայտնում նաեւ այն տարեցներին, ովքեր ճակատագրի կամոք միայնակ են կամ հայտնվել են խմաքի հաստատություններում:

Տարեցների միջազգային օրվա առթիվ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս ընտանիքներին, մաղթում ամենայն սեր ու բարիք, մեր տարեցներին՝ երկար տարիների անհոգ կյանք, երջանիկ ծերություն:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան